# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՎԱՆԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Վանաշեն համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Վանաշեն, (0234)20199, (0234)20572, vanashen.ararat@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25նոյեմբերի 2019թվականի N 17

## ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական Ինքնակառավարման մասին >>Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի պահանջներով.

## ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

Հաստատել Վանաշեն համայնքի ավագանու 7-րդ հերթական նիստի օրակարգը.

1. Բյուջեում փոփոխություն կատարելու մասին
2. Տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը հաստատելու մասին
3. Համայնքի ղեկավարի ,աշխատակազմի աշխատակիցների թվաքանակի , հաստիքացուցակի և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին
4. 2019թ.-ի Վանաշենի մանկապարտեզ ՀՈԱԿ-ի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակի , հաստիքացուցակի և դրույքաչափերի հաստատման մասին
5. Գույքահարկի արտոնություններ տրամադրելու մասին

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

1.ԳՐԻԳՈՐՅԱՆ ՄԵՍՐՈՊ

2. ԵՂՈՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ

3.ԽԱԼԱԹՅԱՆ ՇԱՀԱՆԴՈՒԽՏ

4. ԽԱՉԱՏՐՅԱՆ ՍԱՄՎԵԼ

5. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԾՈՎԱԿ

6. ՆԱՀԱՊԵՏՅԱՆ ՀՐԱՆՏ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա.ԳՐԻԳՈՐՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՎԱՆԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Վանաշեն համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Վանաշեն, (0234)20199, (0234)20572, vanashen.ararat@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25ՆՈՅԵՄԲԵՐԻ 2019թվականի N 18/Ն

### ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>>Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 5-րդ կետի պահանջով .

Ավագանին որոշում է

Հաստատել 2019թ. բյուջեի ծախսային մասում կատարվող փոփոխությունները.

Էլեկտրական հաշվիչներ ձեռք բերելու համար գործառնական դասակարգման փողոցների լուսավորում 06 04 01 51 ծրագրի տնտեսագիտական դասակարգման 5122 վարչ. Սարքավորումների ձեռք բերում հոդվածի գումարը ավելացնել 140.0/ մեկ հարյուր քառասուն / հազար դրամ գումարով , համապատասխան չափով պակասեցնել գործառնական դասակարգման 01 01 01 51 ծրագրի տնտեսագիտական դասակարգման 5122 վարչական սարքավորումների ձեռք բերում 5122 հոդվածի գումարը :

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

1.ԳՐԻԳՈՐՅԱՆ ՄԵՍՐՈՊ

2. ԵՂՈՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ

3.ԽԱԼԱԹՅԱՆ ԾԱՀԱՆԴՈՒԽՏ

4. ԽԱՉԱՏՐՅԱՆ ՍԱՄՎԵԼ

5. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԾՈՎԱԿ

6. ՆԱՀԱՊԵՏՅԱՆ ՀՐԱՆՏ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա.ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՎԱՆԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Վանաշեն համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Վանաշեն, (0234)20199, (0234)20572, vanashen.ararat@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2019թվականի N 19/Ն

## 2020թ.- Ի ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով << Տեղական ինքնակառավարման մասին >> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ և 19-րդ հոդվածների պահանջները.

Ավագանին որոշում է`

Հաստատել տեղական տուրքերի և վճարների հետևյալ դրույքաչափերը

1/ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան նոր շնքերի , շինությունների / ներառյալ ` ոչ հիմնական շինարարության / տեղադրման 1 թույլտվության համար տեղական տուրք սահմանվում է .
Հիմնական օբյեկտների համար.

ա/ մինչև 300 քմընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում` այգեգործական / ամառանոցային/ տների , ինչպես նաև 200քմ ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար `15000 /տասնհինգ հազար / դրամ :
բ/ սույն կետի << ա>> ենթակետով չնախատեսված օբյեկտների համար
բ.ա/ 201-իցմինչև 500.քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար 30 000 / երեսուն հազար / դրամ :
բ.բ/ 501-իցմինչև 1000 քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար 50 000 / հիսունհազար / դրամ :
բ.գ/ 1001-իցմինչև 3000 քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար ` 50000 /հիսունհազար/ դրամ:

բդ) 3001-իցեւավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար` 100 000 դրամ.

գ/ ոչ հիմնական շինությունների տեղադրմանհամար
գ.ա/ մինչև 20քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար 3000/երեք հազար / դրամ
գ/ բ/ 20և ավելի քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար 5000 / հինգ

հազար դրամ /

2/ Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման, ուժեղացման ասրդիականացման, վերականգնման աշխատանքների/ բացառությամբՀՀ օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի / համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով.

ա/ չի նախատեսվում կցակառույցների, բրնակառույցների, շենքերիգաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների / այդ թվում ստորգետնյա/ հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխություն **3000** / երեք հազար / դրամ :

բ/ Բացի շենքերի նշինությունների վերակառուցման, ուժեղացման, արդիականացման վերականգնման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի տրամաչափային չափերն ընդլայնող այլ կառույցների / այդթվում ստորգետնյա / հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխություն, ապա բացի սույն կետի <<ա>> ենթակետով սահմանվծ դրույքաչափի, կիրառվում են նաև նորշինարարության համարսույն հոդվածի 1- ին կետով սահմանված նորմերը՝ օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացման կամշենքերի գործառնական նշանակության փոփոխության մասով :

գ/Նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքերի գաբարիտային չափերն ընդլայնողայլ կառույցների/ այդ թվում ստորգետնյա / շինարարության կամ շենքերի/ գործառնական նշանակության փոփոխություն, եթե այն համարվում է նոր շինարարություն, ապա կիրառվում եննորշինարարության համար սույն հոդվածի 1 - ին 1-ին կետով սահմանված նորմերը :

3/ Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրք սահմանվում է **5000** / հինգհազար / դրամ :

4/ համայնքի վարչական տարածքումհեղուկ վառելիքիհեղուկվառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի վաճառքի թույլտվության համար օրացուցային տարվա համար **60000** / վաթսուն հազար / դրամ.

**5/**Համայնքի վարչական տարածքում գտնվող խանութներում, կրպակներում, հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում կամ ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման եվ նորոգման ծառայության օբյեկտներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրք օրացուցային տարվա համար **60000** դրամ.

6/Համայնքի տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի մանրածախ առ ու վաճառքի թույլտվության համար տեղական տուրք սահմանել օրացուցային տարվա համար **50000** դրամ :

Կիրառվում է **0.5** գործակցով:

5/ Համայնքի տարածքում տեղական տուրքսահմանվում է

«1) ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

ա.մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում- 6000 դրամ,

բ. 26-իցմինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում- 11000 դրամ,

գ. 50-իցմինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում-15000դրամ,

դ. 100-իցմինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում-22000 դրամ,

ե. 200-իցմինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում- 30000 դրամ,

զ. 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում-50000 դրամ:»:

«2) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

ա. մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում- 6000 դրամ,

բ. 26-իցմինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում-11000 դրամ,

գ. 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 14000դրամ,

դ. 100-իցմինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 22000 դրամ,

.ե. 200-իցմինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում- 30000 դրամ,

զ. 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 50000 դրամ:»:

Կիրառվում է 0.5 գործակցով.

6/ Համայնքի տարածքում

ա/ իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին համայնքի վարչական տարածքում <<Առևտրի և ծառայությունների մասին >> Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված՝բացօթյա առևտրի կազմակերպման թույլտվության համար

տեղական տուրք սահմանվում է յուրաքանչյուր օրվա համար 350 դրամ՝ մեկ քառակուսի մետրի համար ։

7/ Համայնքի վարչական տարածքում ՝ առևտրի , հանրային սննդի ,զվարճանքի , շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպմանօբյեկտները , խաղատներըև բաղնիքները / սաունաները / ժամը 24⁰⁰- ից հետո աշխատելու թույլտվության համար տեղական տուրքը օրացուցային տարվա համար սահմանվում է ՝

ա/ Առևտրի օբյեկտների համար՝ 25 000 դրամ

բ/հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար ՝ 50 000 դրամ

գ/ բաղնիքների / սաունաների/ համար ՝250 000 դրամ

դ/ խաղատների համար՝ 600000դրամ

ե/ շահումներով խաղերի կազմակերպման համար ՝ 300 000 դրամ

զ/վիճակախաղերի կազմակերպման համար ՝ 120 000 դրամ

զ/համայնքի վարչական տարածքում ,համայնքային կանոններին համապատասխան հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում է՝

հիմնական շինությունների ներսում՝

ա. մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 4000 դրամ,

՝բ. 26-իցմինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝6000 դրամ,

գ. 50-իցմինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 11000 դրամ,

դ. 100-իցմինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 16000 դրամ,

ե. 200-իցմինչև 500 քառակուսի մետրը ըդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝21000 դրամ,

զ. 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 31000 դրամ,

ոչհիմնականշինություններիներսում՝

ա. մինչեւ 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 500 դրամ՝

բ. 26-իցմինչեւ 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 1500 դրամ,

գ. 50-իցմինչեւ 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 2500 դրամ,

դ. 100-իցմինչեւ 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 4500 դրամ,

ե. 200-իցմինչեւ 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 10000 դրամ,

զ. 500 եւ ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 16000 դրամ:»:

8/ Համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար բացառությամբԵրևանքաղաքին միջպետականու հանրապետական նշանակության ավտոմոբիլայինճանապարհներիօտարման շերտերումև պաշտպանականգոտիներում տեղադրվողգովազդներիթույլտվություններիհամարյուրաքանչյուրամիս մեկ քառակուսի մետրի տեղական տուրքը սահմանվում է`

ա/ ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար `2000 դրամ

բ/ թունդ ալկոհոլային / սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս/ արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար ` 3500 դրամ :

գ/սոցիալական գովազդի համար՝ 0 դրամ

դ/ այլ արտաքին գովազդի համար ` 1500 դրամ :

ե/ դատարկ գովազդային վահանակների համար ` համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 25 %-իչափով

զ/Եթեարտաքին գովազդ տարածող գովազդակիրը տեղաբաշխել և տարածել է իր կազմակերպության գովազդը՝ համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 10%-ի չափով

9/ Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ և կրկնօրինակներ տրամադրելու համար սահմանել 1000 դրամ:

10/ << Հայաստանի Հանրապետության համայնքների խորհրդանիշները /զինանշան, անվանում և այլն/ , որպես օրենքով գրանցվածապրանքային նշան , ապրանքների արտադրության , աշխատանքների կատարման , ծառայությունների

մատուցման գործընթացներում օգտագործելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ 100 000/ մեկհարյուր հազար դրամ/

11/Համայնքի վարչական տարածքում մարդատար - տաքսու / բացառությամբ երթուղային տաքսիների / ծառայություն իրականացնելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 10 000 դրամ :

12.Համայնքի վարչական տարածքում քաղաքացիական հոգեհանգստի / հրաժեշտի/ ծիսակատարության ծառայություններ իրականացնելու և մատուցելու թույլտվության համար տեղական տուրքը օրացուցային տարվա համար սահմանել 500 000 դրամ :

2. Տեղական վճարներ

1. Համայնքի տարածքում շենքի կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման խատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու համար համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար 3000 դրամ .

2/Ճարտարապետաշինարրական նախագծային փաստաթղթերով նախատեսված շինարարության թույլտվություն պահանջող , բոլոր շինարարական աշխատանքներն իրականացնելուց հետո շենքերի և շինությունների (այդ թվում՝ դրանց վերակառուցումը, վերականգնումը , ուժեղացումը , արդիականացումը , ընդլայնումն ու բարեկարգումը ) կառուցման ավարտը ավարտական ակտով փաստագրման ձևակերպման համար համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ 3000 դրամ

3/Ճարտարապետաշինարրական նախագծային փաստաթղթերով նախատեսված աշխատանքներն ավարտելուց հետո շահագործման թույլտվության ձևակերպման համար համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար 3000 դրամ

4/ Համայնքի տնօրինության և օգտագործման ներքո գտնվող հողերը հատկացնելու , հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքումփաստաթղթերի (փաթեթի) նախապատրաստման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝

1. մինչև 1 հա-ի համար 1000 դրամ

2. 1-հա-ից 10 հա-ի համար 5000դրամ

3. 10հա -ից ավելի դեպքում 10 000 դրամ

5/ Տեղական ինքնակառավարման մարմինների տնօրինության տակ գտնվող հողերի հատկացման , հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքում չափագրական աշխատանքների համար վճար 1000 դրամ :

6/Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից մրցույթներ և աճուրդներ

կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման համար մասնակցության վճար 1000 դրամ :

7/համայնքի կողմից աղբահանության վճար վճարողների համար աղբահանության աշխատանքերը կազմակերպելու համար աղբահանության վճարը սահմանվում է.

ա/Աղբահանության վճար սահմանել մեկ շնչի հաշվով ամսական 150 դրամ

բ/Շինարարական և կենցաղային աղբակույտի տեղափոխման թույլտվության վճար սահմանել 1մ3-ի հաշվով 1000 դրամ :

գ/ առևտրի, հանրային սննդիս բնակչության սպասարկմանայլ օբյեկտների համար 1 քմ -իհմար 20 դրամ

դ/ կրթական , մշակութային , առողջապահական , սպորտային շինությունների համար 1 քմ -ի համար 2 դրամ

8/ համայնքի կողմից իրավաբանական անձանց կամանհատ ձեռնարկատերերին շինարարական և խոշոր եզրաչափի աղբի հավաքման և փոխադրման , ինչպես նանհավաքման թույլտվության համար

ա. ըստ ծավալի 1 խմ աղբի համար. 1000դրամ

բ. ըստզանգվածի 1 տ. Աղբի համար 3000 դրամ

9/Ջրահեռացման համակարգը սպասարկելու համար 1/մեկ/ բնակ միավորի հաշվով տարեկան 3000 /երեք հազար/ դրամ

10/ Համայնքային ենթակայության մանկապարտեզի ծառայությունից օգտվողների համար համայնքի կողմից մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման գումար մեկ երեխայի համարօրավարձ սահմանել 250 դրամ, Երկու և ավելի երեխա ունեցող ծնողների համար սահմանել 200դրամ , Ծնողազուրկ երեխաների և Զոհված ազատամարտիկների թոռնիկների համար սահմանել անվճար :

10/ համայնքի արխիվից փասփաթղթերի պատճեններ տրամադրելու համար մեկ փաստաթղթի համար 1000 դրամ

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

1.ԳՐԻԳՈՐՅԱՆ ՄԵՍՐՈՊ

2. ԵՂՈՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ

3.ԽԱՉԱՏՅԱՆ ՇԱՀԱՆԴՈՒԽՏ

4. ԽԱՉԱՏՐՅԱՆ ՍԱՄՎԵԼ

5. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԾՈՎԱԿ

6. ՆԱՀԱՊԵՏՅԱՆ ՀՐԱՆՏ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա.ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՎԱՆԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Վանաշեն համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Վանաշեն, (0234)20199, (0234)20572, vanashen.ararat@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25ՆՈՅԵՄԲԵՐԻ 2019թվականի N 20

## ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ, ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԻ , ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԻ ԵՎ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԻ ՀԱՍՏԱՏՈՒՄ

Ղեկավարվելով << Տեղական Ինքնակառավարման >> մասին Հայաստանի Հանրապետության օրենքի 18 հոդվածի 11- րդ և 28-րդ կետերի պահանջներով

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈւՄ Է՝

Հաստատել համայնքի ղեկավարի , համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը և պաշտոնային դրույքաչափերը.

Աշխատակիցները թվով 13 են :

Հաստիքի անվանումը　　　　հաստիքային միավոր
պաշտոնային դրույքաչափ
Համայնքի ղեկավար　　　　330 000

Հայեցողական պաշտոններ

1.Համայնքի ղեկավարի տեղակալ　　1　　130000

Համայնքային ծառայության պաշտոններ

2. Համայնքապետարանի աշխատակազմի　　1　　195 000

քարտուղար / 1.2 -1/

3.Համայնքապետարանի աշխատակազմի　　1　　159000

գլխավոր մասնագետ /2.3-1 /գլխ.հաշվապահ

4. Համայնքապետարանի աշխատակազմի　　1　　135 000

առաջատար մասնագետ /3.1-1/

| | | |
|---|---|---|
| 5. Համայնքապետարանի աշխատակազմի 1-ին կարգի մասնագետ /3.2-1/ զյուղ գծով մասնագետ | 1 | 122 000 |
| 6. Համայնքապետարանի աշխատակազմի 2-րդ կարգի մասնագետ /3.3-1/ գյուղ գծով մասնագետ | 1 | 110000 |

Քաղաքացիական աշխատանք

7.Գրադարանավար 1 - 73 000

8.Մշակույթի տան վարիչ 1 - 78 000

Պայմանագրային աշխատողներ

| | | |
|---|---|---|
| 9.Օպերատոր | 1 | 110000 |
| 10. Վարորդ | 1 | 78000 |
| 11 . Պահակ | 1 | 78000 |
| 12. Հավաքարար | 1 | 73000 |

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

1.ԳՐԻԳՈՐՅԱՆ ՄԵՍՐՈՊ

2. ԵՂՈՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ

3.ԽԱԼԱԹՅԱՆ ՇԱՀԱՆԴՈՒԽՏ

4. ԽԱՉԱՏՐՅԱՆ ՍԱՄՎԵԼ

5. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԾՈՎԱԿ

6. ՆԱՀԱՊԵՏՅԱՆ ՀՐԱՆՏ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐՏԱՇԵՍ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՎԱՆԱՇԵՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Վանաշեն համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Վանաշեն, (0234)20199, (0234)20572, vanashen.ararat@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**25ՆՈՅԵՄԲԵՐԻ 2019թվականի N 21**

## 2020Թ.-Ի ՎԱՆԱՇԵՆԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ <<ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ>> ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ , ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով << Տեղական Ինքնակառավարման մասին >> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 28-րդ կետի պահանջներով .

Ավագանին որոշում է

Հաստատել Վանաշեն մանկապարտեզ << Համայնքային ոչ Առևտրային կազմակերպության>> աշխատողների թվաքանակը ,հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը .

1.Տնօրեն 1 170 000

2.Դաստիարակ 3.36 105 000

3. Ֆիզ. հրահանգիչ 0.75 105000

4. Երաժշտ. դաստիարակ 0.75 105 000

5.Մանկավարժ 0.75 105000

6.Հաշվապահ 0.5 156000

7.Տնտեսվար 0.5 73 000

8. Բուժքույր 0.75 78 000

9. Դերձակ 0.25 78 000

10.Խոհարար 1 73 000

11. Հավաքարար 0.5 73 000

12.Լվացարար   0.5  73000

13.Դաստ. օգնական    2  89 000

14.Դաստ. օգնական  1  86000

15 Պահակ   1   78 000

16.Դռնապան   0.5   78 000

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

1.ԳՐԻԳՈՐՅԱՆ ՄԵՍՐՈՊ

2. ԵՂՈՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ

3.ԽԱԼԱԹՅԱՆ ՇԱՀԱՆԴՈՒԽՏ

4. ԽԱՉԱՏՐՅԱՆ ՍԱՄՎԵԼ

5. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԾՈՎԱԿ

6. ՆԱՀԱՊԵՏՅԱՆ ՀՐԱՆՏ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐՏԱՇԵՍ ԳՐԻԳՈՐՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՎԱՆԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Վանաշեն համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Վանաշեն, (0234)20199, (0234)20572, vanashen.ararat@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

25նոյեմբեր 2019թվականի N 22

### ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Գույքահարկի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 3.-րդ կետի պահանջներով.

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

Ներքո հիշյալ բնակիչների մեքենայի գույքահարկերը զիջել.

1.Պետրոսյան Սահակ 19800/տասնինը հազար ութ հարյուր/

2.Նահապետյան Ասյա – 10500/տաս հազար հինգ հարյուր /

3.Թիթիզյան Հռիփսիմե – 9000 /ինը հազար/

4.Նահապետյան Նահապետ -15250 / տասնհինգ հազար երկու հարյուր հիսուն/

5.Ղազարյան Հրանտ – 13800/ տասներեք հազար ութ հարյուր/

6.Այանյան Կարեն -17000/տասնյոթ հազար /

7.Բալյան Գևորգ-5500/հինգ հազար հինգ հարյուր/

8.Ղազարյան Ռոման -25000/քսանհինգ հազար/

9. Աղամիրյան Ռազմիկ-15000/տասնհինգ հազար/

10.Չարխչյան Եղիազար – 15500/տասնհինգ հազար հինգ հարյուր/

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

1.ԳՐԻԳՈՐՅԱՆ ՄԵՍՐՈՊ

2. ԵՂՈՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ

3.ԽԱԼԱԹՅԱՆ ՇԱՀԱՆԴՈՒԽՏ

4. ԽԱՉԱՏՐՅԱՆ ՍԱՄՎԵԼ

5. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԾՈՎԱԿ

6. ՆԱՀԱՊԵՏՅԱՆ ՀՐԱՆՏ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐՏԱՇԵՍ ԳՐԻԳՈՐՅԱՆ